

Պ Փ Ո Ր Ձ՞՞

Ա.ՁԴԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

«Փորձը» հրատարակվում է հետևեալ ծրագրի համեմատ բովանդակութեամբ:

Ա. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ. Այս բաժնի մէջ կըմտնեն թէ ինքնուրոյն և թէ օտար լեզուներից թարգմանած բանասիրական աշխատութիւններ՝ կեանքից առնուած նկարագրութիւններ, վէպեր, ուսմաններ, զրամատիական զրուածներ — թէ արձակ և թէ ոտանաւոր:

Բ. ՊԱՏՄԱԿԱՆ. Յօդուածներ Հայոց, Ռուսաց և ընդհանուր պատմութիւնից: Այս բաժնի մէջ կըմտնի նաև ժամանակակից քաղաքական կեանքի տեսութիւնը:

Գ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ. Դիւրըմբռնելի ոճով զրուած զանազան յօդուածներ գիտութեան այլևայլ ճիւղերից առնուած:

Դ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ. Մանկավարժական հարցերի վերաբերեալ ընդհանուր յօդուածներ, զպրոցական գործի այժմեան զրուութիւնը թէ Հայոց մէջ և թէ Ռուսաստան ու արտասահման:

Ե. ՔՆՆՈՒԹԻՒՆ և Մատենախօսութիւն Հայոց, Ռուսաց և օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի:

Զ. ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այս բաժնի մէջ կըտպագրուին այնպիսի յօդուածներ, որոնք մեր ազգի ներկայ վիճակի քննութեանն են նուիրուած, այն է՝ եկեղեցւոյ, ուսումնարանաց, ուսուցչաց, ազգային լուսաւորութեան, ազգային անտեսութեան և հասարակական կեանքի: Կըլինին թղթակցութիւնք ամեն հայաբնակ տեղերից, կարգադրութիւնք Տէրութեան և Հոգևոր վարչութեան:

Է. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Տեսութիւն ներքին գործոց Ռուսաստանի ընդհանրապէս և Անդրկովկասի առանձնապէս: Այս բաժնի մէջ կըբովանդակին նաև թղթակցութիւնք և զանազան հա-

ղորդագրութիւն Ռուսաւտանի և Կովկասի կեանքի մասին:

Ը. ԱՅԼԵԻԱՅԼԻՔ: Ամէն տեսակ լուրեր:

Թ. Յայտարարութիւններ տեղական և եւրոպական լեզուներով:

Փորձի բաժանորդագիւնը ամենայն տեղ տասը մանէթ է:

Ստորագրուիլ կարելի է Տփլիսումը՝ «Փորձի» խմբագրատանը, և Էնֆիաձեանցի ծխախոտի խանութումը, Ջաքարիա Գրիգորեանցի գրալաճառանոցում: Օտար քաղաքացիք կարող են ղիմել խմբագրին հետևեալ հասցէով — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго Журнала „ПОРДЗЪ“. իսկ արտասահմանից — Tiflis. Redaction du Journal Armenien „PHORDZ”

ԻՄԲԱԳԻՐ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

«ՓՈՐՁԻ» ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

- I. ԴՕՆ ԿԱՐԼՈՍ. գործ Շիլլերի—Թարգմ. Գ. Բարխուդարեանց:
- II. ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ. կենսագրութիւն. Յ. Գեղամեանց:
- III. ՋԻՈՒՋԷՊՊԷ ՄԱՁՁԻՆԻ. գործ Լ. Ասլինգ:
- IV. ՅՈՅՍ. բանաստեղծութիւն, Գ. Բարխուդարեանց:
- V. ՖՐԱՆԿԼԻՆԻ ԵՐԻՏՍԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ. հրապարակախօսութիւն. է. Լաբուէի:
- VI. ՍԿՁԲՈՒՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ըստ Հէրբարտի. Ս. Մանղինեանց:
- VII. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Մէլքզաղէ:
- VIII ԼԱՐԱԲԻԱՏԱ. վէպ, Պտուղ Հէյզէի, Թարգ. Գ. Բարխուդարեանց:
- IX ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ. Գ. Չմէկեանց:
- X. ՎԱՐԴՈՒՀԻ (Կղելութիւն). Տ. Սրբուհի Երիցեանց:
- XI. ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՄԻԻԼԼԵՐԻՑ ԵՒ ՈՒԼԱՆԴԻՑ. Թարգմ. Գ. Բարխուդարեանց:
- XII. ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՅԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ. պատմական տեսութիւն. Ա. Երիցեանց:
- XIII. ԵՐՐՈՊԱՑՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԵՏ. Ս. Պալասանեան:

ԱՋԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

- XIV. Հայոց Ազգը և իւր Եկեղեցին:
- XV. Քանի մի առաջարկութիւն:
- XVI. Նամակ Ախալքսայից:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XVII. Տաճկաստանի ապստամբութիւնները:

XVIII. Նուբար Փաշա եւ Նզիպտոս. գործ Շէզլինգէրի:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

XIX. M. Mianсаровъ, Bibliographia Caucasica et Transcaucasica.

XX. Հոֆֆման. Յակոբ Էրլիխ. Թարգ. Քալանթարեանի:

XXI. Յայտարարութիւններ:

1860 թուականներից հայ-թատրոնական գաղափարը տարածուելով Ռուսաստանի հայաբնակ քաղաքների մէջ, զգացվում է պիեսների կարօտութիւն և ամեն կողմից, որտեղ կան փոքր ի շատէ հայ-հոգով զարգացած երիտասարդական ընկերութիւններ, զիմուճ են ժամանակ առժամանակ դէպի մեզ, խնդրելով այս կամ այն պիեսը, և մենք շատ անգամ ղժուարանում ենք բոլոր այդ պահանջները կատարել, մեզանից անկախ պատճառներով:

Ի նկատի ունենալով այս հանգամանքները, մենք կարևոր համարեցինք տպագրել մեր սեպհական թատրոնական թարգմանութիւնները, բաղկացած ինը պիեսներից՝ որոնք են. Օթէլլօ եւ Վէնէտիկի վաճառական, ողբերգութիւններ Ծարաբուլ, հեղինակութիւն Շէկսպիրի, թարգմանուած Ֆրանսիացի լարօշի թարգմանութիւնից. Կանանց Կրթարան և Ստիպուած աճուսնութիւն, առաջինը հինգ արարուածով, երկրորդը մէկ արարուածով, հեղինակութիւն Մօլիերի, թարգմանութիւն բնագրից. Անջէլօ, զրամա երեք արարուածով, հեղինակութիւն Վիկտոր Շիլլի, թարգմանութիւն բնագրից. Պատիւ և Փող, կօմէդիա հինգ արարուածով, հեղինակութիւն Պօնսարի, թարգմանութիւն բնագրից. Գալիլէի գատաստանը, ողբերգութիւն հինգ արարուածով, թարգմանութիւն ռուսերէնից. Անանուն կատակ և Ճամանակակից Գօն-Ճուան. վողէվելներ մէկ մէկ արարուածով, փոխարկուած ռուսերէնից:

Այս պիեսներից մենք կազմում ենք երեք զիրք, որոնցից ամեն մէկը կը պարունակէ իւր մէջ երեք պիես և, նշանակելով ա-

մեն մէկ գրքի արժէքը տպագրութիւնից առաջ 1 ուրբի, իսկ տպագրութիւնից յետոյ 1 ո. 50 կ.

Ինչպէս երևում է այս գներից, մենք նպատակ չունինք շահուելու, այլ միայն կամենում ենք, որ տարածուի մեր տպագրութիւնը ամեն տեղ, ուր կարօտութիւն կայ թարգմանական պիեսների և ապա, եթէ կը յաջողի այս առաջին տպագրութիւնը, մենք կաշխատենք տպագրել մեր ձեռքում եղած բոլոր թատրոնական բէպերուսարը:

Ցանկացողներին խնդրում ենք զիմել իրենց հասցէով հետևեալ տեղերը. Փորձի, Մեղուի և Մշակի խմբագրութիւնները, պ. Զաքարիա Գրիգորեանցի Գրախճառանոցը և պ. Նփրեմ Մատուրեանցի Կամպանների Խանութք, Թիֆլիսում:

ԳԻՈՐԳ ԶՄՇԿԵԱՆ

PROGRAMME

LE CHANT DE L'ÉGLISE ARMÉNIENNE

TRADUIT

EN NOTES MUSICALES EUROPÉENNES

Nous pouvons dire sans hésiter que la musique, ce sentiment instinctif de la nature, qui élève l'âme vers l'idéal, a de tout temps été une nécessité pour l'homme quelque fut son caractère, quelque fut sa nationalité. Nous pouvons dire qu'elle a pris naissance avec l'homme lui-même; et nous invoquons comme preuve de ce que nous avançons, le témoignage de Moïse, le plus ancien et pour ainsi dire le père des historiens, lorsqu'il nous montre Jubal, fils d'Enoc et neveu d'Adam, comme étant le père des joueurs de la harpe et de la cithare. (Gen. Ch. IV, 21).

Cet instinct de la nature qui ranime et réjouit l'âme humaine, comme l'expérience de tant de siècles nous en donne la preuve, n'a donc fait que croître et progresser, se perfectionnant sans cesse jusqu'à nos jours; et c'est surtout par la multiplication de la race humaine, de ses divisions et subdivisions en innombrables na-

tions, qui successivement peuplèrent la terre et les îles, que cet art, ou pour mieux dire, cette science acquit dans un développement ininterrompu, une quantité prodigieuse de formes diverses. C'est ainsi que chaque nation a eu sa propre musique différant complètement par des signes caractéristiques de celle des autres peuples.

Cependant les nations qui s'éloignèrent le moins de ces us primitifs, furent celles d'Orient; ces mêmes nations gardiennes toujours jalouses de leurs mœurs, de leurs prérogatives et de leurs droits nationaux, ont mis aussi de l'opiniâtreté à défendre et à conserver dans son intégrité et dans toute sa pureté le rythme des chants qui leur ont été transmis et qui remontent à une époque très-reculée.

Cette opiniâtreté spécialement vivace en Orient, préserva les chants de l'église de toute refonte, de toute interpolation; la raison en est peut-être parcequ'on réputa toujours une et invariable la manière d'honorer la divine Unité.

Ainsi donc on pourrait presque dire que le chant et la musique des orientaux sont des choses traditionnelles. Ce chant et cette musique, sauf quelques différences accidentelles, sont en substance uniformes, quoiqu'ils ne soient pas assujettis à la servilité des notes, comme dans la musique européenne.

Pour me borner à notre nation, nous dirons que souvent nous avons vu un grand nombre d'Européens venir honorer, par leur présence, les saints offices de l'Eglise arménienne, et l'idée nous est venue qu'il y aurait un travail d'un haut intérêt artistique à présenter aux étrangers, en mettant en notes musicales européennes les nombreuses cantilènes, les tons et les fredons de nos chants religieux; par ce moyen tout connaisseur de musique pourra imiter et exécuter parfaitement tout chant, toute hymne ou toute modulation arménienne; et ce sera pour la première fois que le véritable artiste européen sera mis à même de se former une idée exacte du chant propre aux orientaux.

Le but que nous nous proposons n'est ni sans importance ni sans difficulté. Cependant la Congrégation arménienne des Mekhitharistes de St. Lazare à Venise, toujours désireuse de porter à la

connaissance de tout le monde les beautés inhérentes à leur nation, s'en charge volontiers, étant persuadée que tout en faisant une chose agréable aux étrangers, elle remplira en même temps une œuvre patriotique.

Le principal collaborateur de l'œuvre est le Maestro Pietro Bianchini de Venise, qui en a écrit la musique pour le piano.

L'ouvrage ne formera qu'un volume de 200 pages environ, avec texte en quatre langues; savoir: Arménien, Italien, Français et Anglais. La musique doit être soigneusement imprimée en types typographiques.

Le prix net du volume est de 12 francs. Ce montant peut être remis par mandat sur la poste, par lettre chargée, ou par tout autre moyen.

Le volume aussitôt imprimé sera envoyé franco aux souscripteurs pour l'Italie.

Pour l'étranger ajouter un franc en sus pour frais du chargement du volume.

S'adresser à l'Imprimerie Arménienne, ou à l'adresse.

P. J. Dr. Jssaverdens

St. Lazare.

VENISE.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

հայկական եկեղեցւոյ երգեցողութիւնը

վերածուած

ՆԻՐՈՊԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐԵՐԻ:

Կարող ենք աներկբայ ասել թէ երաժշտութիւնը, բնութեան այդ բնազդական զգացումը, որ բարձրացնում է հոգին դէպի զաղափարականը, ամեն ժամանակ մի պէտք է եղել մարդու համար, չնայած ամենեւին սորա բնաւորութեանը կամ ազգայնութեանը: Կարող ենք ասել թէ նա ծնունդ է առել նոյն իսկ մարդու հետ. և իբր ապացոյց մեր ասածին՝ մեզ վկայ ենք կանչում Մովսէս, պատմիչների մէջ ժամանակով ամենահինը և այսպէս ասենք՝ նոցա հայրը, երբ նա ցոյց է տալիս մեզ Հօբազը, Յնովքի որդին և Աղա՝ մի թռռնեակը՝ իբրև հայր քնարահարների և զլիթառ ածողների: (Ծննդ. ԳԼ, Դ. 21.)

Բնութեան այդ բնագոյումը, որ ոգևորում ու զուարթացնում է մարդկային հոգին, ինչպէս այնքան դարերի փորձը վկայում է մեզ այդ բանին, երթալով աճել ու յառաջ է դիմել, անդադար կատարելագործուելով մինչև մեր օրերը. և մանաւանդ մարդկային սեռի բազմապատկուելովը, նորա անհամար ազգերի բաժանուելովն ու տարբաժանուելովը, որոնք յաջորդաբար լցրին բազմամարդութեամբ ցամաքն ու կղզիները, երաժշտական արուեստը, կամ լաւ ևս ասել, դիտութիւնը ստացաւ անընդհատ վարդացմամբ՝ անհուն անթիւ զանազան ձևեր: Այդպէս ահա իւրաքանչիւր ազգ ունեցաւ իւր յատուկ երաժշտութիւնը բոլորովին տարբեր յատկանիշներով քան միւս ազգերինը:

Բայց այդ նախնական գործածական կերպերից ամենանուազ հեռացողները՝ Արևելքի ազգերն եղան. այդ ազգերը, միշտ նախանձայոյզ պահապան իւրեանց բարքին, իւրեանց արտօնութիւններին ու իւրեանց իրաւունքներին, նմանապէս յամառութեամբ պաշտպանեցին ու պահպանեցին իւր ամբողջութեան ու մաքրութեան մէջ այն երգերի չափաձևութիւնը, որոնք աւանդաբար հասել էին իրենց, և որոնց ծագումը շատ հեռաւոր ժամանակից էր առնուած:

Այդ մասնաւոր կերպով անմեռ ճանաչուած յամառութիւնն Արևելքում՝ զերծ պահեց եկեղեցական երգերը ամենայն նոր ձուլմունքից, ամենայն ներմուծութիւնից. գուցէ այն է դորա պատճառը՝ որ աստուածային Միութիւնը պատուելու եղանակը՝ մարդիկ միշտ մի և անփոփոխ համարեցին:

Այդպէս ուրեմն՝ զիր թէ կարելի կըլինի ասելն թէ արևելցիների երգն ու երաժշտութիւնն աւանդական բաներ են: Այդ երգն ու այդ երաժշտութիւնը, քաւ մի քանի պատահական տարրերութիւններից, հականապէս միաձև են, թէև ենթարկուած չըլինին ձայնագրերի ծառայականութեանը՝ ինչպէս եւրոպական երաժշտութեան մէջ:

Սահմանափակուելով մեր ազգի մէջ, կասնք որ ստեպ տեսել ենք բազմութիւ եւրոպացիներ՝ որ եկել և իւրեանց ներկայութեամբ պատուել են հայ եկեղեցու սուրբ պաշտամունքը, և ծնուել է մեզանում այն միտքը թէ արուեստական շատ հետաքրքիր մի աշխատանք կըլինէր օտարականներին ներկայացնել մեր կրօնական երգերի բազմութիւ եղանակները, ելլէջ ձայներն ու ձայնախաղերը բոլորը վերածուած եւրոպական երաժշտական ձայնագրերի. այս միջոցով ամենայն երաժշտական արուեստագէտ կը կարողանայ հետևիլ և կատարելապէս իրագործել ամենայն երգ, ամենայն օրհներգ (hymn) կամ ամենայն հայկական եղանակաւորութիւն. այս առաջին անգամը կը լինի որ եւրոպացի իսկական արուեստագէտին հնարաւոր կըլինի ճիշդ գաղափար կազմել արևելցիներին յատուկ կրեցողութեան մասին:

Մեր միտքը դրած նպատակն ո՛չ առանց կարևորութեան է և ոչ առանց դժուարութեան: Բայց վենետիկ Սուրբ Ղազարու Մխիթարեանց Հայ Միաբանութիւնը, միշտ ընձակերտ՝ որ համաշխարհ

հին յայտնի անէ այն գեղեցիութիւնները՝ որ անանջատ են իւր ազգից, յօժարակամ յանձն առաւ այդ նպատակի իրազորումը, բողոքովին համոզուած գողով որ միանգամայն օտարներին այդ հաճոյական բանը անելիս, կատարած կըլինի միևնոյն ժամանակ մի հայրենասիրական գործ:

Այս գործիս գլխաւոր աշխատակիցը վենետկեցի վարպետ Պիետրո Բիանքինի-ն է, որ piano-ի համար գրած է այդ երաժշտութիւնը:

Չեռնարկը միայն մի հատոր կը կազմէ մօտ 200 երեսից, հանդերձ չորս լեզուեան բնագրով, այսինքն է. հայերէն, իտալերէն, ֆրանսիերէն և անգլիերէն: Երաժշտութիւնը խնամքով տպագրուած կլինի ձուլածոյ տիպերով:

Հատորի գուտ գինը 12 ֆրանկ է: Այդ գումարը կարելի է մեզ հասցնել փոստայի վերայ փոխանցման ձեռքով, ապահովագրուած թղթով, կամ ուրիշ ամեն միջոցներով:

Հատորը տպագրուելուն պէս՝ վճարքից ազատ՝ կուղարկուի Իտալիայում ստորագրուողներին:

Դրսի երկիրներէ համար մի ֆրանկ և օ յաւելացնելու է վերինի վերայ՝ որ հատորի ապահովագրուելու ծախքը տեսնուի:

Դիմել Հայկական Տպագրատունը (a l'Imprimerie Arménienne de Venise) կամ այս հասցէին

Հ. Յ. Վ. Իսավերտնց

Սուրբ Ղազար

ՎԵՆԵՏԻԿ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ուսանող Ն. Համբ., Պետերբուրգ: Ձեր ուղարկած յօդուածներէ մասին շուտով առիթ կունենամ անձամբ խօսելու Ձեզ հետ:

Պ. Ազգի Բարկամին: Միայն յիմարներն են կարծում, որ կապիտալը նուաճելու համար հարկաւոր է նախ և առաջ սագերին կոտորել:

Պ. Սուրբաշեան, Սիմֆերոպոլ: Ընդունեցէք մեր խորին չնորհակալութիւնը:

Պ. Հ. Ա. Շուշի: Դուք յայտնում էք, որ եթէ Ձեր յօդուածները տպուին «Փորձի» մէջ, խմբագրութիւնից ստացած վարձը նուիրելու էք օրիորդական դպրոցին: Ուրեմն ուղարկեցէք.....տպագրութեան արժանի յօդուածներ:

Դ. Գ. Ա.—ն, Տփլիս:

Où allez-vous, monsieur l'abbé?

Vous allez vous casser le nez.

Дозволено цензурою. Тифлисъ. 1 октября 1876 г.

Типогр. А. Энциаджиауцъ и К^о.











